

ԳԱՐԵԳԻՆ Ա

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԿՈՆԳԱԿԸ Կ. ՊՈԼՍՈ ՊԱՏՐԻԱՐԺ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐԺԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒԹԱՅՅԱՆԻ
ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ**

«ԳԱՐԵԳԻՆ Ա ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ԶՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՍՈՒԹԵԱՍԲՆ
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՈՔՆ ԱԶԳԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱ-
ՄԵԾԱՐ ԱԹՈՈՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՑ
ԱՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ

ՍԻՐԵՑԵԱԼ ԵԴԲՈՐ ՄԵՐՈՑ ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՈՈՅ ԱՐԲՈՑ
ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐԺԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՑ
ԱՄԵՆԱՊԱՏԻ Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐԺԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒԹԱՅՅԱՆԻՆ
ՈՐ Ի ՅԻՍԹԱՆՊՈԼԻ, Ի ԹՈՒՐԵԻԱ

Այսօր, Աստուծոյ կամքով կը կատարուի Չեր՝ գահակալութեան հանդի-
սաշուք արարողութիւնը: Այսօր կը յանձնուի Չեզի պատրիարքական Սսան՝
խորհրդանիշ Չեր հովուական իշխանութեան ի սպասաւորութիւն թուրքիոյ
մեր սիրեցեալ եւ հաւատացեալ ժողովրդեան ընդ հովանեաւ Հայոց Առաքե-
լական Ա. Եկեղեցւոյ:

Հոգեւոր ցնծութեան օր է այս օրը մեր Եկեղեցւոյ եւ մեր ժողովուրդի
համար: Նուիրապետական Մեր Աթոռներէն Կ. Պոլսոյ պատմական Աթոռին Չեր
անձով կը բազմի երիտասարդ, եռանդուն, գործունեայ եւ զարգացեալ
հոգեւորական մը, որ վստահաբար նոր եւ լուսաւոր էք մը պիտի աւելցնէ պատ-
մական այն հարուստ ժառանգութեան վրայ, որ կը յատկանշէ եւ կը փառաւորէ
Կ. Պոլսոյ Պատրիարքական Աթոռը:

Քրիստոնէական պատմութեան երկրորդ հազարամեակի աւարտին եւ
երրորդի արշալոյսին, մեր Հայոց Եկեղեցին, հնագոյն ազգային Եկեղեցին ողջ
աշխարհի մէջ, պէտք ունի հոգեւոր վերանորոգութեան եւ Ա. Հոգւոյ ներգոր-
ծութեան ի վայելումն մեր պատուական ժողովուրդին:

Չեր գահակալութեան երջանկաբեր առիթով, Մենք կը յայտնենք Չեզի, Կ.
Պոլսոյ Պատրիարքութեան հոգեւորական դասուն, աշխարհական ժողովակա-
նութեան եւ հաւատացեալ ժողովուրդին Մեր խոր համոզումն ու կենդանի
յոյսը, որ Չեր նուիրումով Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը առաւել պտղալից

արդիւնաւորութեամբ իր բաժինը պիտի բերէ մեր եկեղեցւոյ իսկական բարեկարգութեան եւ բարենորոգութեան շարժումին:

Մեր եկեղեցւոյ հոգեւոր սրբազնաստուրք կեդրոնէն՝ հայ ժողովուրդի հոգիին մէջ խորանագեալ Սայր Աթոռ Ս. Էջմիածնէն Չեզի կ'ուղղենք Մեր եւ ամբողջ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան սիրոյ սրտազգած ողջոյնները: Թող Ս. Էջմիածնով մարմին առած Աստուծոյ Միածին Որդւոյն այցելութիւնն ի Հայաստան եւ հայ ժողովուրդին դառնայ ներշնչող մնայուն աղբիւր զօրութեան եւ ծառայութեան, մանաւանդ մեր Սայր Հայրենիքի անկախութեան այս նոր շրջանին եւ հայութեան վերագարթօնքի այս ժամանակին ի սփիւռս աշխարհի:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ա. Հոգւոյն, եւ յաւետ օրինեալ ի Մենք. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ԴԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 20 Նոյեմբերի
Յամի Տեառն 1998 և ի Թուին Հայոց ՈՆԻՒՏ
ի Սայրավանս Արքայ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/202